


Մեր հանձնարարքն է.
դու Լեւոն

Լեւ

✓ 2057



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

1999

ԱՇԽԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

ՉԵՌՆԱՐԿ



ԱՇԽԱՏԱՍԻՐԵՑ

ԱԻԵՏԻԲ ՏԵՐ-ՅԱԿՈՎԲԵԱՆՑ

Լ.ԿՆ
2057

ԹԻՖԼԻՍ

ՅՈՎՀԱՆՆԵՍԻ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ ՏՊԱՐԱՆ

1883



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՆՏԱԿՆԵՐ
Կ Ա Մ
Պ Ա Լ Ե Ս Տ Ի Ն

ԱՇԽԱՏԱԳԻՐԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

Ձ Ե Ռ Ն Ա Ր Կ

ՀԱՅ ՏՂԱՅՈՑ ՆԻ ՕՐԻՈՐԿԱՅ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

658

ԱՇԽԱՏԱՍԻՐԵՑ

ԱԻԵՏԻԳ ՏԵՐ-ՅԱԿՈՎԵԱՆՑ

Ուսուցիչ հին Հայաստանի աշխարհագրութեան Թիֆլիսի Ներսիսեան
Հայոց Աշգայնի Հոգեւոր Դպրանոցի

ԹԻՖԼԻՍ

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ ՏՊԱՐԱՆ

ՕՐԲԵԼՆԵՆ ՓՈԳՈՑ, 5

1883

ԻՒՐ ՎԱՂԱՄԵՌԻԿ ՀՕՐԸ

ՅԱԿՈՎԲ ՏԵՐ-ՅԱԿՈՎԲԵԱՆԻՆ

ԿԱՐՕՏ ՍՐՏՈՎ

ՆՈՒՐՈՒՄ Է

ԱՇԽԱՏԱՍԻՐՈՂԸ

4 2057-60

38 2060

Յ Ա Ռ Ա Զ Ա Բ Ա Ն

Ուսումնարանի նպատակն է կրթել մանկան բարոյական, մտաւորական և ֆիզիքական ոյժերը: Սրբազան պատմութիւնը յատկապէս նշանակուած է մանկան բարոյական կրթութեան համար, որովհետեւ սրբազան պատմութեան կենսագրութիւններն մէջ բարոյականութեան զանազան կողմերը այնքան պարզ, տեսական, դիւրամատչելի և որոշ աչքի ընկնող են, որ հազիւ թէ մի ուրիշ առարկայ կարողանայ մըցել դուրս հետ: Նոյն իսկ ամենալեւա-ցական փիլիսոփայական-բարոյական վարդապետութիւնները և գաղափարները այստեղ միանգամայն մարմնանում տեսանելի են կացուցանվում: Բայց սրբազան պատմութիւնը իւր այժմեան ուսուցման եղանակի շնորհիւ միանգամայն իւր նպատակին չէ հասնում. թէև դորան իւր նշանակութեան համաձայն միւս առարկա-նէրն մէջ առաջին տեղն է տուած, բայց իսկապէս հազիւ վերջին տեղը կարողանում է բռնել: Աշակերտները թէև այդ առարկայի համար շատ ժամեր են կորցնում, բայց շատ քիչ բան են սովորում, այն ևս թիւր և թերի գաղափարով: Հէնց առաջի դասից աշակերտը երեւակայում է թէ ամէն բան օգի մէջ է կատարվում, իբրև թէ սուրբ պատմութեան մէջ յիշուող բոլոր անձինք մեր երկրից շատ հեռու, հասարակ մահկանացուներից բոլորովին տար-բեր գերբնական մարդիք են եղած: Մեզանից հով իւր վերայ այդ բանը չէ փորձել: Դուրս հետևանքը այն է լինում, որ նախ աշա-կերտը միանգամայն սխալ գաղափար է կազմում առարկայի մա-սին. երկրորդ՝ աշակերտը ընդունելով սրբազան անձանց իբրև օգի մէջ ապրող, գերբնական մարդիկ, հաւանականապէս կ'մտածէ, որ գերբնական մարդիկ միայն կարող են ունենալ այդպիսի գերբնա-կան առաքինի յատկութիւն, հասարակ մարդիք չեն կարող ունե-նալ. ուրեմն ինքն էլ չի ձգտի դէպի այդ գաղափարական առա-քինութիւնը. երրորդ՝ մի տեսակ երկմտութիւն և թերահաւատու-թիւն կ'ծագի աշակերտի մէջ դէպի եղելութիւնները, որով միան-գամայն ոչնչանում է նպատակը:

Սրբազան պատմութեան նպատակն է 1, այլ աշակերտներին բարոյական գաղափարական պատկեր. 2, յարուցանել աշակերտի մէջ կամք ձգտել դէպի այդ գաղափարը: Աշակերտին վերացակա-

նից դէպի իրականը, անբնականնց դէպի բնականը և օգից դէպի հոգը դարձնելու համար հարկաւոր է ուսումնասիրել այն երկիրը, ուր պատահել են սուրբ պատմութեան մէջ յիշուած բոլոր իրողութիւնները, որ է Սուրբ երկիրը կամ Պալեստին: Այդ նպատակով ես կազմած եմ համառօտ աշխարհագրութիւն Սուրբ երկրի, իբրեւ օժանդակ սուրբ պատմութեան: Խօսելով Սուրբ երկրի աշխարհագրութեան անհրաժեշտ կարեւորութեան մասին, իբրեւ օժանդակող սուրբ պատմութեան, ես ոչինչ նոր բան չեմ ասում. այդ բանը վաղուց ընդունուած է Եւրոպական տէրութեանց բարեկարգ ուսումնարաններում: Թէ որ տարուանից պէտք է սխել Սուրբ երկրի աշխարհագրութիւնը այդ կախուած է ուսումնարանի կազմութիւնից, միայն թէ աշխարհագրութեան ուսուցիչը պէտք է յարմարուի սուրբ պատմութեան և միշտ նախընթաց պէտք է անցնի:

Ա.-Է. Ի. Տէր-Յակոբէան

Թիֆլիս.

22 Փետրվարի.

Պ Ա Լ Ե Ս Տ Ի Ն

ԱՆՈՒՆԸ: Այս երկիրը առաջ կոչվում էր Քանանացոց աշխարհ Քամի որդու Քանանի անունով, որ աշտարակաշինութիւնից յետոյ այստեղ բնակուեցաւ, յետոյ կոչուեցաւ Պալեստին կամ Փղշտացոց աշխարհ, Փղշտացոց ցեղի անունով, որ մինչև Հրէից գալը տիրում էր այս երկրին: Իսրայելացոց նուաճելուց յետոյ կոչուեցաւ Իսրայելացոց տշխարհ, Յուդայի երկիր, Աւետեաց երկիր, Հրէաստան, իսկ Քրիստոսից յետոյ կոչուեցաւ Սուրբ երկիր:

ՍԱՀՄԱՆՆԵՐԸ: Պալեստինի սահմանները նորա հօր թագաւորների ժամանակ (Դաւիթ և Սողոմօն) շատ ընդարձակուել են, իսկ թուլերի ժամանակ փոքրացել. ուելի յայտնի են հիւսիսից Հերմոն լեռը, արևելքից Արաբիան, հարաւից Մեռեալ ծովի հարաւային սահմանը, արևմուտքից Միջերկրական ծովը:

ՏԱՐԱԾՈՒԹԻՒՆԸ: Պալեստինի երկայնութիւնը մօտ 250 վերստ է, լայնութիւնը մօտ 140 վերստ. ողջ երկրի տարածութիւնն է 6,000 քառակուսի մղոն:

ՄԱԿԵՐԵՒՈՅԹԸ: Պալեստինի ծովեզրեայ մասը հարթ դաշտային է ծածկուած գեղեցիկ կանաչով: Այս հարթութիւնը միջին մասում ընդհատվում է Կարմէլ լեռներով, որ դէպի հիւսիս արևմուտք գնալով հասնում է մինչև Աքքա ծոցը և խորը ծովը մտնելով կազմում Կարմէլ (Ջէբէլ-Մար-Էլիաս) հրուանդանը մօտ 2,000 ոտնաչափ բարձրութեամբ: Պալեստինի ծովեզրեայ դաշտավայրը երեք մասից է բաղկացած. Կարմէլից հիւսիս կոչվում է Փիւնիկեցոց դաշտավայր. Կարմէլից հարաւ Սարոնի դաշտավայր. Սարոնից հարաւ կոչ-

վում է Փղշտացւոց դաշտավայր: Այս դաշտավայրներից դէպի արևելք, Յորդանան գետի աջ ափով, Հիւսիսից դէպի հարաւ ձգւում է Լիբանանու շղթան, որ իւր բազմաթիւ մանր ճիւղերով կազմում է երեք բարձրավանդակ՝ հիւսիսում Գալիլիայի բարձրավանդակը, որի ամենաբարձր ձիւնապատ գագաթն է Լիբանան, սորանից հարաւ Սամարիայի բարձրավանդակը, սորանից ևս հարաւ ձգւում է Հրէաստանի բարձրավանդակը: Լիբանանից դէպի արևելք, Հիւսիսից հարաւ ձգւում է Յորդանանու հովիտը, որ ամբողջ Պալեստինի ամենահարուստ և ամենապտղաբեր մասն է: Յորդանանի հովիտից դէպի արևելք, Հիւսիսից հարաւ ձգւում է երկայն լեռների շարք, որ հարաւում կոչւում է Աբարիմ, հիւսիսում Գալաաթ (վկայ): Գալաաթը դէպի հիւսիս ձգուելով միանում է Հերմոնի հետ, որ ամառ ձմեռ ձիւնով է պատած: Քանանացւոց երկրի արևելեան սահմանը աստիճանաբար ցածրանալով իջնում է Արաբիայի անապատը:

ԳԵՏԵՐԸ: Պալեստինը ունի բազմաթիւ մանր գետակներ, որոնք լաւ որոգում են երկիրը: Գետերից նշանաւոր են՝ Յորդանան, սա իւր բազմաթիւ մանր ճիւղերով սկսւում է Հերմոն և Լիբանան սարերից. ջուրը դեղնագոյն, արագավազ է, տեղ տեղ անցնում է ձիթենու, թզնենու, արմաւենու, անտառների միջով, տեղ տեղ թանձր եղեգնոտով և վերջապէս թափւում է Մեռեալ ծովը: Առաջ այս գետը հաղորդակցութիւն ունէր Կարմիր ծովի հետ, բայց երկրի վերայ մեծ փոփոխութիւններ լինելուց լետոյ այժմ հաղորդակցութիւն չունի: Յորդանանի վտակներից նշանաւոր են ձախ կողմից՝ Հերոմակ, Յաբոկ (Ջերկա), Առնոն, որ Մեռեալ ծովի մէջ է թափւում. ձախ կողմից նշանաւոր են Եփրեմի հեղեղատը: Միջերկրական ծովի մէջ թափուող գետակներից նշանաւոր են՝ Ալոնտէս, Կիսոն, Սորեկ, Բեսուրա:

ԼՃԵՐԸ: Պալեստինի լճերից նշանաւոր են Մեռեալ ծով կամ Ասֆալտեան լիճ (Բիբլէտիւ-Լիւտ՝ Աովտի-լիճ, Բախր-

Լիւտ). սորա երկայնութիւնն է տասը մղոն, լայնութիւնն է երկու մղոն. մակերևոյթը անխռով, հանգիստ է. ջուրը պարզ վճիտ է. բայց զգուելի դառը, աղալի. ոչ մի ջրային կենդանի մէջը չի բնակւում. եթէ մէջը ձուկ ձգեն կմեռնի, չի կարող ապրել: Մեռեալ ծովի ափերքը ցից ցից ժայռերով են պատած, տեղ տեղ աղուտներ են և աւազապատ, բայց առաջ այդպէս չէր. գեղեցիկ այգիներ, պարտէզներ և ծաղկազարդ արօտները ծածկում էին նորա շուրջը: Լիճ Գեննէսարէթ կամ Տիբէրիա կամ Գալիլիացւոց (Բախր-Տաբարիէիս) երկայնութիւնն է 24 վերստ, լայնութիւնը 7 վերստ. հարաւում աւելի խոր է քան հիւսիսում. ջուրը համով է: Լիքը բազմաթիւ ձկնեւորով. շրջապատած կանաչազարդ լեռներով և բլուրներով: Այս լճի միջով է անցնում Յորդանան գետը: Լիճ Մարոն (Ել-Գուլէիս). գտանւում է Գեննէսարէթից հիւսիս. փոքր է և տիղմոտ. ջուրը ճահճոտ, անթափանցելի ծղոտով և եղեգնով պատած:

ՕԳԸ: Պալեստինի օդը շատ տաք է, մանաւանդ երբ հարաւից փչում է համսին քամին: Գարունքը սկսւում է փետրվարին, մարտին արդէն երկիրը ծածկուած է կանաչով, թանձր անձրևները թափւում են երկնքից, բոլոր բոյսերը հասունանում են. ապրիլին կամ մայիսի կիսին հունձը արդէն պատրաստ է. ամբողջ ամառ անձրև չի գալիս. ամենայն ինչ կչորանար, եթէ ցուրտ գիշերները բոյսերը չը զովանային ցողով, ուստի հայրը որդուն օրհնելիս ասում է — «Աստուած տայ քեզ երկնքի ցողից»: Սեպտեմբերից դարձեալ շարունակ թափւում է անձրևը. սկսւում է աշունը. ձմեռը տևում է միայն դեկտեմբեր և յունվար ամիսը. բայց այդ ժամանակը ևս ձիւն չէ գալիս:

ԲՈՅՍԵՐԸ: Պալեստինը շատ հարուստ է բոյսերով, սարերի լանջի վերայ վայրի դրութեամբ մենք տեսնում ենք նշենի, թզնենի, ձիթենի, նարնջի, կիտրօնի, շաքարի եղեգն, խաղողի որթ և թթենի. դաշտերում բազմատեսակ հացաբոյսերի

ալիաճաճան արտերը, անտառներում հսկարտութեամբ ամբառնում են զօրագոյն կաղնիները, որոնք անփոյտ փայտ են տալիս նաւաշինութեան համար, շքեղագարդ ուփին, թանձրատերեւոյն և բւեկնին, որից տերպէնտին խէժն են շինում. այգիները և պարտէզները լիքն են հազարաւոր տեսակ պլուտոլատու ծառերով:

ԿԵՆԴԱՆԻՆԵՐԸ: Պալեստինը ունի բարեխառն և տաք կլիմայի բոլոր կենդանիները. աւելի նշանաւոր են՝ ոչխար, այծ, արջառ, էշ, ձի, ուղտ, որ շատ հարկաւոր է մանաւանդ թափառականների համար, մեղու, որ շատ առատութեամբ մեղր է տալիս և լիքն է անտառները. կան նաև վիթեր (վայրի այծ), նապաստակ, ճագար, գալլ, բորենի, առիւծ և վագր:

ՀԱՆՔԵՐԸ: Պալեստինի հողը ըստ մեծի մասին կաւային և սևահողային է կայ և աւազային տեղեր:

Հանքերից նշանաւոր են կաւիճ, որ ահագին լեռներ է կազմում, մարմար, քարածուխ, որձաքար:

ՊԱԼԵՍՏԻՆԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԸ

Պալեստինի ամենահին բնակիչներն են Քանանացիք Քամի որդու Քանանի սերունդը. յետոյ Յեսուի առաջնորդութեամբ այս երկրին տիրեցին Եբրայեցիք, որոնք սկզբում երբ Եգիպտոսից եկան թուով 600,000 հոգի էին չհաշուելով կանանց և երեխայոց. բայց վերջումը շատ շատացան, այնպէս որ Սաուլը Ամմոնացւոց յետ պատերազմելիս կռուի դաշտը դուրս եկողների թիւը 670,000 էր: Բայց Իսրայէլացիներից Պալեստինում կենում էին շրջակայ երկրներից եկաւոր գաղթականներ՝ Փղշտացիք, Ամաղեկացիք, Մադիամացիք, Մովաբացիք, Ամմոնացիք և այլ մանր ազգութիւններ: Վերջերում Քրիստոսից յետոյ աւելացան Ասորիք, Արաբացիք, Տաճիկներ, Յոյներ, Հայեր, Նեգրներ:

Այժմ Պալեստինի բոլոր բնակչաց թիւն է 650,000, որոնց մեծ մասը թափառական Արաբներ են՝ Բէդուիններ. մնացած մասը նստակեաց երկրագործներ՝ Փէլազներ. արցաքանակը ամենաօդորոշ է. ինչ որ



Արաբ

աշխատում են կալուածատէր շէյխերը ձեռքից խլում են, մնացածն էլ Տաճիկ կառավարիչներն են խլում և ինքը երկրագործը միշտ մնում է քաղցած, ուղորմելի ու անասունի կեանք է վարում:

ԲՆԱԿԱԶԱՅ ԿՐԾՆԸ: Պալեստինի նախնի բոլոր ազգերը բացի Հրէաներից կռապաշտ էին, իսկ Հրէայք ճանաչում էին մի ճշմարիտ Աստուած, բայց և այնպէս Հրէայք էլ ամենահին ժամանակներից յաճախակի մոռանալով ճշմարիտ Աստուծուն, կռուքեր էին շինում և

երկրպագում, իւրաքանչիւր անգամ, երբ Հրէայք ճշմարիտ հաւատից շեղվում էին, Աստուած նոցա պատժում էր և նոքա վերստին դառնում էին դէպի իւրեանց ճշմարիտ հաւատը: Սկզբում աստուածապաշտութեան և զոհաբերութեան համար առանձին նշանակուած տեղեր չկային. տան ամենամեծը բացօդում փայտեայ սեղան էր կազմում, վերան դնում զոհը, մորթում և այրում, որի ծուխը դէպի երկինք Աստուծոյ մօտ հասնելով հաճելի էր լինում նորան. Աստուծուն հաճոյանալու համար և մարդկային զոհ բերում էին (Աբրահամը Իսահակին, Յեփթայէն իւր աղջկան): Մովսէսի ժամանակից Հրէայք աստուածապաշտութեան և զոհաբերութեան առանձին տեղեր ունէին, որ կոչվում էր Խորան վայելեան: Սա հետեւեալ կազ-

մութիւնը ունէր. անփուտ փայտից շինած էր տապանակ ոսկի թերթերով պատած. սորա մէջն էր պատուիրանների տախտակները. այս տապանը կոչվում էր տապանակ ուխտի. այս մասը ծածկուած էր վարագոյրով և կոչվում էր սրբութիւն սրբոց. սորանից յետոյ դրած էր սեղան խնկով, ոսկի աշտանակով, եօթն ճրագարաններով և էլի մի սեղան տասերկու հացերով. սա ևս ծածկուած էր վարագոյրով. սա կոչվում էր սրբութիւն.

այս բոլորը ծածկուած էր վրանով և ընդհանուր անուանով կոչվում էր խորան վկայութեան. այս խորանն էլ պատած էր սրահով, ուր ժողովուրդը զոհ էր մատուցանում: Սողոմոնի ժամանակ այս բոլորի փոխանակ շինուեցաւ ամենափառաւոր տաճար, ուր և տեղափո-



Հրէայ

խուեցաւ տապանակ ուխտին: Պաշտօն մատուցանելու համար սկըգբում առանձին մարդիք չկային, բայց Ահարոնի ժամանակից յատուկ մնաց այդ պաշտօնը Աւիի ցեղի վերայ. երբ տաս երկու ցեղի առաջնորդների գաւազանները գրին խորանում Ահարոնի գաւազանը մի գի-

շերում ծաղկեց, որով Աստուած ընտրեց նորան քահանայապետ: Այս ցեղը երկիր չստացաւ, որովհետեւ տասանորդ էր ստանում: Վերջերում Հրէից մէջ ծագեցան մի քանի աղանդներ. ամենից բազմամարդ աղանդն էր Սամարացւոց աղանդը: Սամարացիք ընդունում էին միայն Մովսիսի հինգ գիրքը, կատարում էին թլփատութեան, ամուսնութեան և այլ օրէնքները. սոցա հոգեւոր գլուխը նստում էր Սիւքէմ և համար-

վում էր Ահարոնի յաջորդութիւն: Հրէից միւս մեծ մասը ընդունում էր և մարգարէութիւնները: Այժմ Պալեստինում թուի շատութեամբ տիրապետող կրօնն է Մահմետականութիւնը:

ԲՆԱԿՉԱՅ ԿԵԱՆՔԻ ԵՂԱՆԱԿԸ

Պալեստինի բնակիչները կեանքի եղանակին նայելով կարելի է բաժանել նստակեացների և թափառականների: Նստակեացները պարապում են երկրագործութիւնով և արհեստներով. թափառականները պարապում են խաշնարածութեամբ և որսորդութեամբ:

ՆՍՏԱԿԵԱՅՆՆԵՐ: Նստակեացները շինում են գիւղեր և քաղաքներ. հին ժամանակ քաղաքները սովորաբար շրջապատած էին լինում պարսպով, կոփած քարից շինած քառանկիւնի կամ կոլոր աշտարակներով. պատերից ներս բարձրանում էին նոճիները և սոսիները. քաղաքը ներս մտնելու համար լինում էին մի քանի ամուր երկաթակալ դռներ. փողոցները նեղ և ծուռ էին լինում, միայն տեղ տեղ լայն բացվում էին հրապարակները: Տները քարից կամ հում աղիւսից էին լինում շինած, ցած դռներով, վանդակապատ փոքրիկ պատուհաններով, կարմիր կամ կանաչ ներկած շրջանակներով, հարթ տանիքով, որի վերայ անց են կացնում զով երեկոները տաք երկրի բնակիչները: Տան ներսը գեղեցիկ գորգերով և կապերտներով, բէհէգեայ և ոսկեթէլ գործուածքներով էին լինում զարդարած. պատերը ներսից նկարվում էին զանազան պատկերներով. ողջ տունը շրջապատած էր լինում այգիով և պարտէզով:

ԹԱՓԱՌԱԿԱՆՆԵՐ: Խաշնարած թափառականները չեն շինում ոչ գիւղեր և ոչ քաղաքներ, նոքա կենում են վրանների տակ. նոցա բոլոր հարստութիւնն է մի քանի տիկ՝ ջուր բերելու համար, մի քանի վերմակ, պղինձ, գէնքեր, ուղտի և

էջի համետներ. ձիերի թամբեր և այն կենդանիները, որ արածացնում են: Աերակուրն էլ շատ հասարակ է՝ միս, կաթ, իւղ, պանիր, սէր, կարագ և ջուր: Սոքա շատ հիւրասէր են, եթէ տեսնեն որ հեռուից մի մարդ է գնում, իսկոյն առաջ կվազեն, ջուր կտանեն ոտները լուանան, ապա առաջ կը բերեն սէր, մսոճուն, կթխեն նկաններ (ինչպէս Սբրահամը արաւ): Սոցա հագուստն էլ պարզ է՝ մի կտոր կտաւ գլխին փաթաթած, կտաւի բաճկոն հագած. մէջքը կաշիով կամ կարմիր շիլայով ամրացրած. թիկունքին վերարկու, ոտներին սանդալիկ: Կանայք ունենում են ապարանջաններ, օղեր և մի քանի ոսկեայ, արծաթեայ զարդեր: Խաշնարածը ամեն օր առաւօտը խաշնը տանում է արածացնում, կէսօրին բերում կթում, կրկին տանում. երեկոյեան կրկին բերում կթում: Երբ մի տեղ արօտը վերջանում է թափառական խաշնարածի ողջ բանակը շարժվում է մի ուրիշ տեղ:

Որսորդը նոյնպէս աստանդական կեանք է վարում, բայց նա չունի ոչ խաշնարածի վրանը և ոչ երկրագործի խուղը, այլ կենում է բացօթեայ ինչպէս Եսաւը: Որսորդը անդադար չափում է սար, ձոր, զառիվայր, խաւար անտառ, արեգակի կիզող ճառագայթների տակ. ձմեռուայ ցրտին, փոթորիկ և անձրևի ժամանակ չարչարվում է, իւր անձը վտանգի ենթարկելով, որովհետև շատ անգամ նորա հանդէպ են դուրս գալիս լուրջ, գայլ, վագր, բորեր, որոնցով լիքն է Պալեստինի լեռները: Որսորդները ամէնից ճարպիկ, բիրտ, կուպիտ, կորիչ, վայրի և զօրեղ են:

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿԵԱՆՔԸ

Հրէաները հին ժամանակ ապրում էին մեծամեծ ընտանիքներով. տան բոլոր որդիքը, թոռները իւրեանց հարսերով և որդկերանցով ապրում էին միասին մի հօր գերիշխանութեան ներքոյ. հայրը մահվան ժամանակ կանչում էր իւր որ-

դոց, բոլոր ժառանգութիւնը և տան գերիշխանութիւնը յանձնում էր աւագ որդուն, միւս որդիք պէտք է հնազանդուէին աւագին և պսակուելով նոյն տան մէջ մնային թէև կարող էին հեռանալ. պսակը կատարվում էր շատ հասարակ. առանց տղայի տեսնելու կամ հաւանելու: Եղիազար ծառան իւր տիրոջ որդու համար աղջիկ է ընտրում առանց ջոկելու, բաղտի բերմամբ, որը և պատահի: Աղջիկը ստանալու համար տղայատէրը տալիս էր զանազան ոսկեայ և արծաթեայ ընծաներ աղջկայ եղբօրը, հօրը, մօրը. համարեա թէ փողով էին գնում աղջիկը: Հրէից օրէնքով, բարեկամի վերայ պսակուելը կարելի է, մինչև անգամ երկու քրոջ կին էին վերցնում, ինչպէս Յակովբը երկու քրոջ Ռաքելին և Լիային ուզեց: Բազմակնութիւնը հրէից մէջ տարածուած էր: Պսակի առանձին խորհուրդ չէին կատարում. եթէ նորա պսակին մի երեխայ էր լինում, ծանօթները և բարեկամները իւրեանց կարողութեան չափ ընծաներ էին բերում: Երեխայ չբերելը շատ մեծ ամօթ էր. ուստի ամուլ կանայք շատ մեծ զոհերով և արտասուներով դիմում էին Աստուծոյ օգնութեան և շատ անգամ խոստանում էին նորածին որդուն նուիրել տաճարին մինչև իսկ զոհել: Նորածին երեխային ութերորդ օրը տանում էին տաճար թլփատութեան և անուանակոչութեան համար: Աղջկերքը տղայոց հետ հաւասար կատարում էին դաշտային աշխատութիւնը. նոքա արածացնում և ջուր էին տալիս խաշներին: Մարդավաճառութիւնը հրէից մէջ, ինչպէս և ուրիշ ազգերի մէջ ընդունուած էր:

ՊԱԼԵՍՏԻՆԻ ԳԱՂԱԳԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆ

Պալեստինը Քանանացոց ժամանակ Քանանի որդոց թուով բաժանած էր տասն և մէկ մասը. երբ Իսրայէլացիները Յեսու-Նաւիայի առաջնորդութեամբ տիրեցին այդ երկրին տաս երկու մասը բաժանեցին 12 ցեղի անունով, որոնք են՝

Ասիր, Նեփթաղիմ, Զաբուդոն, Իսաքար, Մանասէ, Եփրեմ, Դան, Բէնիամին, Յուդայ, Շմաոն, Դադ, Ռուբէն: Մինչև Սաուդ Հրէայք թագաւոր չունէին. առաջ կառավարվում էին նահապետներով, յետոյ դատաւորներով. Սաուդից սկսուեցաւ Հրէից թագաւորութիւնը. 12 ցեղը միասին ունէին մի թագաւոր: Սողոմոնից յետոյ Հրէից թագաւորութիւնը բաժանուեցաւ երկու մասը. դէպի Հիւսիս տասը ցեղերը կազմում էին Իսրայէլացւոց թագաւորութիւնը, Հարաւում Բէնիամինի և Յուդայի ցեղերը կազմեցին Յուդայի թագաւորութիւնը, թագաւոր ունենալով Դաւթի ցեղից: Իսրայէլացւոց թագաւորութիւնը վերջացաւ 722 տարի Քրիստոսից առաջ. դորան նուաճեցին Ասորեստանի թագաւորները: Յուդայի թագաւորութիւնը վերջացաւ 588 տարի Քրիստոսից առաջ. սորան նուաճեցին Բաբելոնի թագաւորները: Այնուհետև Պալեստինը փոփոխակի ընկնում է Բաբելացւոց, Ասորեստանցւոց, Պարսից, Հայոց և Ասորոց թագաւորների ձեռք: Քրիստոսի ժամանակ Պալեստինը Հռովմայեցւոց ձեռին էր և կառավարվում էր առանձին իշխանով, որ կոչվում էր թագաւոր Հրէից: Պալեստինը այդ ժամանակ բաղկացած էր չորս գլխաւոր մասերից. Հիւսիսային մասը կոչվում էր Դալիլիա, միջինը Սամարիա, Հարաւայինը Հրէաստան, Յորդանան ու արեւելեան կողմը կոչվում էր Պէրէիա:

Հ Ի Է Ա Ս Տ Ա Ն

Հրէաստանը բռնում է Դանայ, Բէնիամինի, Յուդայի և Շմաոնի վիճակները՝ գլխաւոր քաղաքն է Երուսաղէմ (Ել-Քուդո, Երուշալայիմ). Երուսաղէմը Հիմնեց Մելիքսեդեկ Քրիստոսից 2,000 տարի առաջ և կոչեց Սալեմ, յետոյ Քանանացւոց ցեղից Յեբուսացիք առնելով այդ քաղաքը կոչեցին Երուսաղէմ, որ նշանակում է խաղաղութիւն: Երուսաղէմ գտանվում է մի թերակղզիաձև բարձրավանդակի երեք բլուրների

վերայ՝ Սիոն, Աքրա, Մորիա: Այս բարձրավանդակի արեւելեան կողմով խորը ընկած է Յովսափատի ձորը, որի միջով վազում է Կեդրոնի Հեղեղատը. արեւմտեան կողմով նոյնպէս Գեհէնոնի խոր հովիտն է գտնւում, որի միջով արագավազ Հեղեղը գալիս միանում է Կեդրոնի Հետ: Երուսաղէմը շրջապատած է հաստ, ամուր և բարձր պարիսպներով, 70 աշտարակներով, 7 դռներով. քաղաքի Հիւսիս արեւմտեան կողմը, ուր նա բնականապէս չէ պաշտպանուած ոչ ձորով, ոչ հովիտով, պարիսպները և աշտարակները կրկնակի են: Երուսաղէմը Հին ժամանակ այնքան ամուր էր և անմատչելի իւր հաստ պարիսպներով և ահարկու աշտարակներով, որ ասում էին թէ միայն քաղաքի կոյրերը և կաղերը բաւական էին նորան պաշտպանելու համար: Այս քաղաքը աւելի գեղեցկացաւ և մեծացաւ Դաւթի և Սողոմոնի օրով. Սիոն լեռան վերայ նշանաւոր են. 1, Դաւթի ահպար. 2, Մէծ-Հերովդէի պալատը. 3, Սողոմոնի պալատը. 4, Կայսրի պալատը, որի վերայ այժմ գտնւում է ամենափրկիչ Հայոց եկեղեցին, որ լոյները խլեցին. 5, Անուշ Ժամանակաշրջանի պալատը. որի տեղը այժմ գտնւում է Հայոց Հրեշտակապետաց անուանով վանքը. 6, Վերնապալատը, որի վերայ երկու անգամ եկեղեցի է շինուել երկու անգամ էլ մահմետականները մզկիթ են դարձրել. 7. սորանից փոքր ինչ հեռու գտնւում է այն տունը, ուր մահուան քնով ննջեց Տիրամայրը: Այժմ Սիոն լեռը քրիստոնէից դամբարան է: Քաղաքի ամենանշանաւոր տեղն է Դաւթի Սուրբ գերեզման կոչուած եկեղեցիով, ուր է Յիսուսի գերեզմանը. եկեղեցին գլխաւորապէս Հայոց, Յունաց և Լատինացւոց ձեռին է. իւրաքանչիւրը իւր լատուկ մասն ունի, թէև կան էլի ուրիշ Հինգ քրիստոնէայ ազգեր, որոնք առանձին սեղաններ ունին պատարագ մատուցանելու համար, բայց Սուրբ գերեզմանի վերայ պատարագ մատուցանել չեն կարող. այդ իրաւունքը միայն վերոյիշեալ երեք ազգութեան է պատկանում, որոնք ամենայն օր պատարագ են մատուցանում և ժամէ ժամ խունկ ծխում: Սուրբ գերեզմանի երկայնութիւնն

է 6 ոտնաչափ. լայնութիւնը 6 ոտնաչափ. բարձրութիւնը 8 ոտնաչափ. Բազմաթիւ ջահերով և ճրագներով մշտապէս լուսաւորուած է սուրբ գերեզմանը: Գերեզմանի մօտ է այն վէճ, որի վերայ հրեշտակը կանգնելով ասաց «Յիսուսը այստեղ չէ. յարութիւն առաւ»: Տաճարի դրան մօտ է այն բարձր, որի վերայ Յիսուսի մարմինը հալուէով և խուկնով օծեցին. սորա շուրջը միշտ վառուած են ջահերը և ճրագները: Սորանից



Յիշ

տասերկու քայլ հեռու մի քսան աստիճանի սանդուխ բարձրանում է Գողգոթայի գագաթը. այն տեղը, ուր կանգնացրած էր Տիրոջ խաչը սեղանով ծածկուած է և ջահերով լուսաւորուած. երկու աւազակների խաչերի տեղը սե սե քարեր են ցրած. սոցա հանդէպ է այն քարը, որ պատառուեցաւ Տիրոջ հոգին աւանդելիս. այս տեղերը առաջ Հայոցն էր Յոյները և Լատինացիք խլեցին:

— իսկ Մորիա լերան վերայ հին ժամանակ նշանաւոր էր Սաւաթի աստուծոյ, որ այժմ աւերակ է և տեղը շինած է Էօմերայ գեղեցիկ քարաշէն մզկիթը. մզկիթի գմբէթի տակ, մի ոսկէզօծ երկաթնապատ տեղ գտնվում է մի քար, որի վերայ ըստ աւանդութեան նստել է Յակովբ և ՄաՀամեդ մարգարէն: Երդասակէմում այլ և նշանաւոր է այն ճանապարհը, որով Յիշ



Տաճիկ

սուսին տարան նախ դատելու և ապա մահուան վճիռը կատարելու: Այս ճանապարհը բաժանվում է մի քանի կայանքի՝ 1, Գէթսեմանի պարտեզ. 2, Աննա քահանայապետի տուն. 3, Կալիափայի տուն. 4, Պիղատոսի պալատը և այլն: Միւս հնութիւններից նշանաւոր են՝ Մեծատան, Ղազարոս աղքատի, Սիմէօն փարիսեցու տան աւերակները. Պրոպատիկէ աւազանը Բէթհեզդա սրահում, որ այժմ ցամաքել և մասամբ ծածկուել

է հողով: Երուսաղէմումն է գտանվում Հայոց Սուրբ Յակովբայ վանքը, որ հիմնուած է Սուրբ Լուսաւորչայ օրով. մեծ է և ընդարձակ. ունի տպարան, գրադարան, ուսումնարան «Ժառանգաւորաց» անունով. այստեղ է նստում Երուսաղէմաց Հայոց պատրիարքը և միաբանութիւնը. ունի բազմաթիւ սուրբ անօթիներ, որ Յիլիկիոյ Հայոց թագաւորներն են ընծայել. նշանաւոր է և Հայոց Հրեշտակապետաց վանքը, որոյ պարիսպները Հայոց Լեւոն վերջին թագաւորն է շինել տուել:

Այժմ Երուսաղէմը անշուք է. 28,000 բնակիչ ունի, որից 10,000 Հրէայ են, 5,000 Քրիստոնեայ, որի մէջ են 500-աչափ Հայեր. մնացածը Մահմետական են: Երեք ազգութիւնն էլ Երուսաղէմը ընդունում են իբրեւ Սուրբ քաղաք: Քրիստոնեան ասում է, «այդտեղ խաչուեցաւ, թաղուեցաւ, լաբեաւ Յիսուս». Հրէան ասում է «Մօրիա լեւան վերայ Աբրահամը զոհ բերաւ Իսահակին և այդտեղ էր ամբողջ դարեր սրբութիւն սրբոց՝ Տիրօջ բնակարանը». Մահմետականն ասում է «այստեղից Մեծ-Մարգարէն Մահմետը ձիու վերայ նստած սկսեց ճանապարհորդութիւնը դէպի երկինք»:

Երուսաղէմի շուրջը գտանուած նշանաւոր տեղերն են Զիթենեաց լեռն. սորա վերայ մի կիսաւեր մզկիթ կայ, որ առաջ եկեղեցի է եղած. գտանվում է այնտեղ, որտեղից Համբարձաւ Քրիստոս. անշինջ մնում է ըստ աւանդութեան ձախտի դարշապարի կնիքը, որ թողել է Քրիստոս երկինք ամբառնալիս. շատ Համբուրելուց երկիրը մաշուել է. սորանից մօտ 80 քաջ Հեռու գտանվում է մի քաջայուած մաառու այնտեղ, ուր Քրիստոս իւր աշակերտներին սովորեցրեց տէրունական աղօթքը: Զիթենեաց և Մօրիա լեռների մէջ ձրգվում է Յովսափատայ ձորը, ուր գտանվում են ամենահին մարգարէների, նահապետների, թագաւորների և այլոց գերեզմանները. այստեղ են գտանվում Աբիսողոմի, Ս. Յակօբի, Զաքարիայի, Յովսափատի շիրիմները. այստեղ Նախապիպն քարկոծուեցաւ: Զիթենեաց լեռան ստորոտումն է Գեթսեմանի

պարտէզը, որ 100 քառակուսի քաջ տարածութիւն ունի. այստեղ ութ Հաստ ձիթենի կայ, որ Փրկչի Ժամանակից է մնացել. պարտիզի ծալքին է այն տեղը, ուր Պետրոս իւր ընկերներով քնած էր. դօրան մօտիկ է Օրշիայը, ուր ծնկաչոգ աղօթում էր Փրկչը. այրի մուտքը երկաթէ դռներով փակած է և բանալին Կաթողիկոսի ձեռին է: Գորանից փոքր ինչ Հեռու գտանվում է Զաքարիայ տեղը, ուր Յուզան Համբուրելով մատնեց իւր Տիրօջ: Գեթսեմանի Հանդէպ կայ մի ձեռագործ անձու, ուր 50 ոտտիճան ցած իջնելով կհասնենք Սուրբ կուսի շիրիմի տապանը, որ միշտ լուսաւորուած է ջահերով և լապտերներով. սորա մօտ են գտանվում Ս. Յովսեփի և Տիրամօր ծնողաց գերեզմանները. սոցա վերայ գտնուած եկեղեցին Հայոց և Յունաց ձեռին է: Յովսափատայ ձորին մօտ է Սկեղդամայ բրտի ագարակը, որ Հայոց ձեռին է. մինչև այժմ այնտեղ գտանվում են բրուտի անօթի բեկորներ: Սորա մօտ է Նէէայ ջրհորը. սորանից էլ փոքր ինչ Հեռու գտանվում է Սելովամայ աւազանը: Այժմ ևս այցելուները լուանում են աչքերը ի յիշատակ Քրիստոսի կոյրը բժշկելու: Երուսաղէմի մօտ է ՅովՀաննու գիւղը, ուր կայ մի մենաստան, որ Լատինացւոց ձեռին է. մենաստանում է Զաքարիայի տուներ և այնտեղ, ուր ծնաւ Կարապետը, ոեղան է կանգնեցրած: Մենաստանի մօտ է Բեկենեաց ձորը, ուր Խորայէլացիք Գողիադի դէմ դուրս եկան: Երուսաղէմից փոքր ինչ արեւելք գտանվում է Բեթանիա գիւղը, այս գիւղումն է Յիսուսի բարեկամ Ղազարոսի գերեզմանը՝ որ գտանվում է մի այրի մէջ, որի երկայնութիւնն է 20 ոտնաչափ, 5 ոտնաչափ է լայնութիւնը: Սորանից փոքր ինչ Հեռու գտանվում է Մարիամի և Մարթայի տան աւերակները: Բեթանիայից փոքր ինչ Հեռու գրտանվում է Բեթփագէ գիւղը, որտեղից աւանակ տարան Յիսուսի Համար: Երեւի. գտանվում է Երուսաղէմից 20 վերստ դէպի հիւսիս արեւելք. հին Ժամանակ Հարուստ և բազմամարդ քաղաք էր, շրջապատած ամուր պարիսպներով և ահեղ

աշտարակներով. սորան հիմնեցին Յեբուսացիք. Յեսուս տա-
պանակի պատելով և փողերի հնչելով կործանեց սորա պա-
րիսպները կրկին նորոգուեցաւ. այժմ մնում են նախնի աւե-
րակները և մի քանի մահմեդականաց գետնափոր տներ և ե-
ղեգնաշէն հիւղեր: Քաղաքից մի ժամ հեռու է այն աղբիւրը,
որ քաղցրացրեց Նդիսէն. սա բղխում է այն լեռնից, որի վե-
րայ Յիսուս քառասուն օր պահեց և լաղթեց փորձողին: Ն-
բուսաղէմից 7 վերստ դէպի հարաւ քարոտ բլուրների մէջ,
ձորագաղտակների վերայ գտանվում է Բէթլէէմ (տուն հացի)
կամ Նփրաթայ (բարեբեր) կամ քաղաք Դաւթի: Այստեղ ծը-
նուեցաւ Փրկիչը. սուրբ տեղերում շինած է մենաստան, շրը-
ջապատած հաստ պարիսպներով. մենաստանում բնակվում են
Հայ, Յոյն և Լատինացի միայնակեացները. մենաստանին կից
գտանվում է սուրբ Այրի խաչաձև եկեղեցին, որ շինուած է
Քրիստոսի առաջին դարերում. շատ անգամ նորոգուել է և
այժմ պատկանում է Հայոց և Յունաց: Եկեղեցւոյ երկու դա-
սից երկու սանդուխ պտուտաձև 15 աստիճանով ցած են
իջնելում դէպի ծննդեան քարայրի ստորերկրեայ փոքրիկ ե-
կեղեցին, որ դուրս է փորած քարաժայռի մէջ. երեսուն և
երկու փուռաւոր կանթեղներ լուսաւորում են մսուրի տեղը.
այնտեղը, ուր ծնաւ Փրկիչը, մարմարեայ սեղանէ շինած որի
վերայ կախած են երեք մշտափառ կանթեղներ. դորա հանդէպ
է այն տեղը, ուր Տիրամայրը Փրկիչը զրկած նստած էր և
մոգերը եկան երկրպագելու. այս եկեղեցին կոչվում է Տիրա-
մօր եկեղեցի: Սուրբ Այրի մօտ է անմեղ մանկանց մատուռը,
որոնք կոտորուեցան խստասիրտ թագաւորի հրամանով. մա-
տուռը պատկանում է Հայոց. դրան վերայ գտանվում
է Հայոց Հեթում թագաւորի արձանագրութիւնը. Բեթ-
լէէմի մօտ է այն ձորը, ուր Դաւիթ լաղթեց Փղշտացւոյ.
այս ձորում է և Ռաքելի գերեզմանը: Բեթլէէմ այժմ 5,000
բնակիչ ունի, որից մօտ 80 հոգի Հայ են:

Հռամա. գտանվում է Բեթլէէմի մօտ. այստեղ մեռաւ

Ռաքել: Քէշրա կամ Կարիաթարբուկ (նամակաց քաղաք) կամ
Ել-Խալիլ. գտանվում է լեռան ստորոտում. այս տեղ էր բնակ-
վում Աբրահամ. այստեղ են մինչև այժմ մի մահմեդականաց
մզկիթում Աբրահամի և նորա որդոյ գերեզմանը: Քերբոնը
այժմ 10,000 բնակիչ ունի. հարուստ քաղաք է: Էմմաուս.
գտանվում է Երուսաղէմից հիւսիս արեւմուտք. Քրիստոս ու-
ղեկից էր իւր աշակերտներին, երբ նոքա Էմմաուս էին գնում:
Արեմաւէ (Բամլա). Յովսէփի հայրենիքն է, որ այրը տուեց
Քրիստոսի թաղման համար. մօտ 7,000 բնակիչ ունի: Հայերը
ունեն եկեղեցի սուրբ Գէորգ անուանով: Յոպէ (Նաֆֆա). այս
քաղաքը աւելի նշանաւոր էր Սողոմոնի ժամանակ. ունի նա-
ւահանգիստ. այստեղ են հաւաքվում Երուսաղէմից ու Պալես-
տինի զանազան կողմերից Եւրոպա ուղարկուող ապրանքները.
սորա նաւահանգստում նաւելիս Յովնան կուլ գնաց կէտ ձկան
փորը. (6)-աչափ Հայ կան այստեղ, որոնք ունեն վանք. նախ
այստեղ են հաւաքվում Երուսաղէմ գնացող Հայ ուխտաւոր-
ները: Բէթլէ. Աբրահամի երկրորդ հանգստութեան տեղն է:
Գալա. գտանվում է ծովի ափին, բարեբեր դաշտի մէջ. վա-
ճառաշահ քաղաք է. այստեղով են անցնում Նգիպտոս գնա-
ցող կարաւանները. աւելի նշանաւոր էր Փղշտացւոց ժամա-
նակ. այժմ 8,000 բնակիչ ունի: Հայերը ունեն մենաստան
Հրեշտակապետաց անուանով: Սոքոֆ և Գոֆո. երկուսն էլ մի
ժամանակ հարուստ քաղաքներ էին. ունէին հօգօր թագաւոր-
ներ, բայց բնակիչները վերին առտիճան չարագործ և մեղա-
ւոր էին, ուստի Աստուած բարկուցաւ դոցա վերայ, երկիրը
սլաւոռուեց, հուր և ծծումբ թափուեցաւ դոցա վերայ, ծխի
ու կրակի մէջ կորան երկու քաղաքները:

Հրէաստանում լիշուած միւս քաղաքներն են՝ Յամնիա,
Ակկարոն, Լիւզա, Մովդիիմ, Կարիաթարիմ, Բէթսամիւս, Մա-
սեփա, Գաբաւոն, Գալգալա, Ննգազդի, Անաթովթ, Սոկքով,
Բեգէկ, Ազոփտոս, Գերարա, Ռափա, Ասկալոն, Լաքիս, Սիկե-
լաք, Բերսաբէ, Մաոն և այլն:

նայ (գարագ բախում) խոցած խոցով նայ հոգիս չմեղավ
- թույլ չի բռն պա **ՍԱՄԱՐԻԱ** նախնաւոր լիցաւի-լ
բաւարարան շան զն նեխա մեծի մեծ բռնապա նաւագրի նայ
Սամարիան հին ժամանակ բռնում էր երկու վիճակներ՝
Մանասէի և Եփրեմի։ Բաղաքներից նշանաւոր են Օւսաբե-
սա համարվում էր Եփրեմի ներուստէմի. այստեղ էին նրա-
տում Իսրայէլի կապալա թագաւորները և շինեցին Բահայ
կուռքի բաղինը, ուր 550 քուրմեր ծառայում էին նորան։
Նշանաւոր էր և Սքաբի փղոսկրազարդ առճարը, շուրջը պատած
էր հաստ պարիսպներով. մի քանի անգամ աւերուեցաւ. այժմ
փոքրիկ կեղատա գիւղ է, ուր բնակվում են Արաբները, մնում
են մինչև այժմ փառաւոր պալատների, հոյակապ տաճար-
ների և ահեղ աշտարակների մնացորդները։ Սեւէմ կամ Սի-
քար. այժմ կոչվում է Նաբուլոս. Սամարիայի մայրաքաղաքն
էր. լաճախ են թաքցվում էր ասպատակութեանց և օստանու-
թեան. այժմ ևս կայ. 12,000 բնակիչ ունի. շրջապատած է
թթենու, ձիթենու, նշենու, արմաւենու անտառներով և մա-
ցառներով. աները հարթ կտուրներ ունին. վեր են բարձրա-
նում միմիայն մինարաները. վաճառականութիւնը շատ առա-
ջացած է։ Բաղաքից մօտ քառորդ ժամուայ ճանապարհ հե-
ռու է այն ջրհօրը, որտեղից Սամարացի կինը ջուր խմացրեց
Յիսուսին. այժմ այդ աղբիւրը ցամաքել է. 40 ոտնաչափ է
աղբիւրի զբի խորութիւնը։ Սիւքէմից հիւսիս է Գեբաղ (ա-
նէճքի լեառ). Սիւքէմից հարաւ է Գաբիզին (օրհնութեան
լեառ)։ Սամարիայի միւս քաղաքներից նշանաւոր են՝ Սելովմ,
Կեսարիա Պալեստինայ, Թեբէս, Ապալմնիա, Անտիոպատրիս,
Թազմաթ և այլն։

ԳԱԼԻԼԵԱ

Գալիլիան հին ժամանակ բռնում էր Ասերայ, Զաբու-
ղոնի, Իսաքարայ և Նեփթաղիմայ վիճակները։ Բաղաքներից

Նշանաւոր են Նաբլէշ (Էն-Նաղերախ)։ Երբ Կոչս Մարիամի
հայրենիքն է. մնում է մինչև այժմ Յովսէփի հիւննի տան
աւերակը. 7,000 բնակիչ ունի, որոնց մեծ մասը բաւարար-
կան Արաբներ են, մնացածը Քրիստոնեայ։ Հին ժամանակ այդ
տեղ միայն Հրէաները կարող էին կենալ. այժմ ոչ մի Հրէայ
չկայ։ Արեւելքում Քրիստոնեաներին նազարէթցի են ասում,
որովհետեւ առաջ նազարէթի բնակիչները ընդունեցին Քրի-
ստոնէութիւն։ Նազարէթից դէպի արեւելք միւս կողմերից
բոլորովին բաժանուած կոնունսնաւ բարձրանում է Թափոր
լեառը, որ ծածկուած է կաղնի անտառով. սորա վերայ պա-
տահեցաւ Քրիստոսի պայծառակերպութիւնը. սորա գագաթին
մինչև 5-երորդ դարը 100-ից աւելի լվանքեր, բազմաթիւ
ճգնարաններ շինեցին Հալերը, Յոյները և այլն. նշանաւոր է
Նրից տաղաւարաց եկեղեցին, ուր պայծառակերպութեան տօ-
նին Նազարէթից Ատոնիացիք գալիս են յապտարաք մայրու-
ցանում։

Սիւքէմից հարաւ Սիբերայիս, այժմ կոչվում է Սաբարիէ.
գտնւում է համանուն լճի ափին. հին ժամանակ Սիբերիան
շրջապատած էր պարիսպներով ամրացրած աշտարակներով.
վերջին ժամանակները երկրաշարժից կործանուեցաւ. այժմ
Սիբերիան փոքր, անշուք գիւղ է. մօտ 3,000 բնակիչ ունի,
որոնք Հրէաներ են և գոնազան մահմեդականներ. շրջա-
կալքը ծածկուած է արմաւենիներով։ Սիբերիայից կէս ժամ
ճանապարհ հարաւ կան սոգային, ծծմբային, երկաթային տաք
(65°) հանքային ջրեր, որոնց վերայ մարմարից (բաղանիքներ
են շինել։ Սաբէր (Բեղիզուա). սա առաջ նշանաւոր քաղաք
էր, խիստ երկրաշարժից կործանուեցաւ։ Կաթուղաւ. գտնա-
վում է Սիբերիա լճի ափին. հին ժամանակ Գալիլիայի ա-
մենահարուստ և շքեղ քաղաքն էր. այժմ մնում են բարձր
կոթողների, հոյակապ տաճարների և քաղ շինութեանց աւե-
րակները, որոնք իւրեանց նուրբ փորագրութեամբ վկայում են
գորա նախկին փառքը։ Այժմ կախառնառումը մի չնչին գիւղ

է և կոչվում է Տալ-Գառն: Բէլաշախ. հրէից լեզուով նշանակում է ձկնորսութեան տեղ. գտնվում է համանուն լճի ափին. քաղաքից դէպի արեւմուտք Տիբերիա լճի ափին քարաժայռեր կան, որոնք կոչվում են խոզերի լեռներ. այստեղ էր, որ խոզերը ծովը թափուեցան. այս երկիրը կոչվում է Գերգեսացւոց երկիր. Գերգեսացիք այն ի գլխաւոր ազգերից էին, որոնք բնակվում էին Քանանացւոց երկրում մինչև Իսրայէլացւոց գալը: Այժմ Բեթսայիդան աւերակ է: Կառ, փոքրիկ գիւղ է, ուր Քրիստոս առաջին անգամ հրաշք գործեց. գիւղը մտնող ճանապարհի վերայ մի ծառ կայ, որի տակից բղկում է մի աղբիւր. այս այն աղբիւրն է, որտեղից թակոյկները լքցրին ու Քրիստոս գինի դարձրեց. մինչև այժմ կան Նաթանայէի տան աւերակները. այժմ Կանա քաղաքը շրջապատուած է խաղողի այգիներով և ձիթենու մացառներով. 3,000 բնակիչ ունի. մեծ մասը քրիստոնեայ են: Քարաշին, Գէնէաբէլ, երկուսն էլ մի ժամանակ նշանաւոր քաղաքներ էին, գտնվում էին Տիբերիա լճի ափին: Նայն քաղաք, այստեղ էր, որ Քրիստոս այրի կնոջ միամօր որդուն յարուցեցին տուեց, սորա մօտ էր որ Բարակ և Դեբովրա Սիսարայի զօրքը խորտակեցին: Մագաշ կամ Մակդագոն (Մէջդալ). մի ժամանակ խիստ ամրացւած էր աշտարակներով և նշանաւոր զինուորական կէտ էր, այժմ գիւղ է. այստեղից էր Մարիամ Մագդաղինացին: Գալիլիայի միւս գլխաւոր տեղերն են՝ Դան, Կադէս, Պանէաս (Կեսարիա փոխապէս), Յովտապատ, Աքքով կամ Աքքա (Պաղմայիս), Սեփովրա, Եփա կամ Պորփիրիոն, Եկբատան, Ենտոր և այլն:

Պ Ե Ր Է Ա

Գտնվում է Յորդանանի արեւելեան կողմը և բռնում է Ռուբէնի, Գադայ, Մանասէի կէս ցեղի վիճակները, Բաթանու, Գաղատաւ երկիրները: Նշանաւոր տեղերն են՝ Դերասա, Հուա-

մովթ, Գաղատաւ, Յաբխ, Եսեբոն, Աստարովտ, Սոկրովտ, Բոսոր, Ամմովն, Փանուէլ:

ՊԱԼԵՍՏԻՆԻ ՇՐՋԱԿԱՅ ԵՐԿԻՐՆԵՐԸ

ՓՂՇԱՅԻՈՑ ԱՇԽԱՐՀ: Փղշտացւոց աշխարհը գտնվում է Պալեստինի հարաւ արեւմտեան կողմը Միջերկրական ծովի ափին. Փղշտացիք զօրեղ պատերազմասէր ազգ էին. պարսկացիները երկրագործութեամբ և խաշնարածութեամբ. ունէին բազմաթիւ մեծամեծ քաղաքներ. շրջապատուած ամուր պարիսպներով. կառավարվում էին առանձին թագաւորներով: Սոքա յաճախակի յարձակվում էին Իսրայէլացւոց երկրի վերայ, առնում էին քաղաքները և բնակչաց զերի առնում տանում. այս բանը Իսրայէլացիք ընդունում էին իբրեւ Աստուծոյ պատիժ: Փղշտացւոց երկրումն էին Գազա, Ասկալոն, Բերաբէ քաղաքները, որոնք վերջը միացան Պալեստինի հետ:

ԱՄԱԼԵԿԱՅԻՈՑ ԱՇԽԱՐՀ: Այս երկիրը գտնվում է Փղշտացւոց աշխարհից հարաւ. Ամաղեկացիք յափշտակասէր ազգ էին. հանգստութիւն չէին տալիս ճանապարհորդներին իւրեանց ասպատակութեամբ. յարձակվում էին և Իսրայէլացւոց վերայ:

ԵԳՐԱՅԻՈՑ ԱՇԽԱՐՀ: Գտնվում է Ամաղեկացւոց աշխարհից արեւելք, Մեռեալ ծովից հարաւ. այստեղ է գտնվում Սէիր լեռը, այստեղ էր բնակվում Իսահակը: ՄՈՎԱԲԱՅԻՈՑ ԱՇԽԱՐՀ: Գտնվում է Մեռեալ ծովի արեւելեան կողմը. Մովաբացիք զօրեղ ազգ էին, ունէին մեծամեծ քաղաքներ. կառավարվում էին սեփական թագաւորներով:

ՄԱԴԻԱՄԱՅԻՈՑ ԱՇԽԱՐՀ: Մադիամացւոց աշխարհը գտնվում է Մովաբացւոց աշխարհից արեւելք. և ձգվում էր դէպի հարաւ. Մադիամացւոց աշխարհումն էր կենում Մովսէս նախ քան Իսրայէլացւոց Եգիպտոսից դուրս գալը:

Հայաստանի սարերից մէկի Արարատի կամ Մասիսի վերայ իջնի: Մարդկութեան երկրորդ բազմանալը ևս Աստուած կամեցաւ, որ Հայաստանից սկսուի, ուստի Հայաստանում իջաւ Նոյ նահապետը իւր սերունդով. աշխարհիս առաջին անգամ կռապաշտութիւն տարածող, ճշմարիտ Աստուծուն մոռացող և իւր անձը աստուածացնող մարդուն ոչնչացնող, սպանող մարդը ևս Հայաստանից դուրս եկաւ, որ էր Հայի դիւցազն. սա կործանեց Բէլին, խորտակեց նորա ոյժը և ազատեց ճշմարիտ աստուածապաշտութիւնը, Հայը և Հայաստանը նորա բռնակալ ձեռից: Ողջ երկրում Հայաստանն էր, որ առաջին անգամ Քրիստոնէութիւն ընդունեց. Հայաստանն էր, որ մարդասիրաբար իւր մօտ հրաւիրեց աշխարհիս Փրկչին երբ նա այլ ազգաց հալածանաց ենթակայ էր. ի վերջոյ Հայաստանն էր որ արժանացաւ Աստուծոյ՝ Փրկչի նամակին և անձեռագործ պատկերին: Հին ժամանակ Հայաստանը ունէր իւր սեփական թագաւորները, որոնցից մի քանիսը յարձակելով տիրել են Պալեստինին և այդտեղից շատ Հրէայ գերիներ են տարել Հայաստան:

ՍԻՆԱՅԻ ԹԵՐԱԿՂԶԻ: Եթէ մենք ելնենք Պալեստինից, գնանք դէպի հարաւ, անցնենք Եդոմացոց աշխարհը, կ'պատահենք մի շատ ընդարձակ անապատի, ծածկուած աւազով, կրով, որձաքարով և հատաքարով. սա է Սինայի թերակղզին, որ դէպի հարաւ և արեւելք վերջանում է մի կարգ լեռներով և բլուրներով: Այս թերակղզին եռանկիւնաձև է. լայն կողմով դարձած է դէպի հիւսիս. իսկ սուր ծայրով հարաւ, ուր խորը մտնում է Կարմիր ծովի մէջ: Այս թերակղզու հարաւային կողմը բարձրանում է Սինայի լեռը 8,600 ոտնաչափ բարձրութեամբ: Այս լեռան գագաթին Տէրը լուսափայլ, հրեղէն ամպերի մէջ երևեցաւ և տուաւ զբաւոր օրէնքներ Իսրայէլացոց ազգին. այս լեռը այժմ կոչվում է Ճէբէլ Մուսա. սա մի որձաքարի դժուար բարձրանալի լեռն է. սորա վերայ այժմ գտանվում է Յունաց Այլակերպութեան


մենաստանը եկեղեցիով. առաջ այստեղ կար և Հայոց մենաստան, որ այժմ բարձի թող է արած: Սորա մօտ կայ մի պարտեզ, ուր գտանվում է քաղցրահամ աղբիւր. այս աղբիւրից Յոթորի դուռները ջուր խմացրին Մովսէսին, մի փոքրիկ մատուռ էլ կայ այնտեղ, ուր մօրենին վառվում էր և չէր այրվում: Սինայից հիւսիս գտանվում է Դորեք լեռը, որի



Նէփր

ստորոտում Մովսէս ոչխարներ արածացնելիս տեսաւ անկէզ մօրենին: Սորա մօտ է Ռափիտիմա գաղաթը, ուր մի որձաքար կայ 15 ոտնաչափ բարձրութեամբ 50 ոտնաչափ շրջապատով. այս քարից Մովսէս ջուր հանեց. Սինայի թերակղզով դէպի արեւմուտք գնալով, կհասնենք Սուեզ քաղաքը Կարմիր ծովի ափին. քաղաքից 12 վերստ հարաւ Կարմիր ծովը ծանծաղոտ է. այս տեղ էր որ ջուրը բաժանուեցաւ և Իսրայէլացիք անցան:

ԵԳԻՊՏՈՍ: Սինայի թերակղզից դէպի արևմուտք գնալով մենք կմտնենք Եգիպտոս: այս երկրի միջով հարաւից հիւսիս ձգվում է Նեղոս գետը, որ բերանից մօտ բազմաթիւ ճիւղերի բաժանուէրով թափվում է Միջերկրական ծովը: Եգիպտոսի քաղաքները, որոնք սովորաբար կոչվում էին Փարաճոն: Եգիպտոսի քաղաքները շատ անգամ աւելի մեծ, հարուստ և բազմամարդ էին քան Պալեստինի քաղաքները. կալին այնպիսի քաղաքներ, որոնք միլիոնից աւելի բնակիչ ունէին. արհեստները և ուսումը շատ առաջացած էին: Եգիպտոսի ամենապտղաբեր մասը Նեղոսի հովիտն էր, ուր և շինած էին գլխաւորապէս քաղաքները, բայց ամենից բարեբեր մասը Նեղոսի բերանի մօտ աջ ափն էր, որ և կոչվում էր Գէւէ. այստեղ բնակվում էին Իսրայէլացիք: Այստեղ է Հռամեստ կամ Ռամսես կամ Նարպաօլիս քաղաքը, որտեղից Իսրայէլացիք ճանապարհ ընկան դէպի Քանանացւոց աշխարհը:



Եգիպտոսի քաղաքները, որոնք սովորաբար կոչվում էին Փարաճոն: Եգիպտոսի քաղաքները շատ անգամ աւելի մեծ, հարուստ և բազմամարդ էին քան Պալեստինի քաղաքները. կալին այնպիսի քաղաքներ, որոնք միլիոնից աւելի բնակիչ ունէին. արհեստները և ուսումը շատ առաջացած էին: Եգիպտոսի ամենապտղաբեր մասը Նեղոսի հովիտն էր, ուր և շինած էին գլխաւորապէս քաղաքները, բայց ամենից բարեբեր մասը Նեղոսի բերանի մօտ աջ ափն էր, որ և կոչվում էր Գէւէ. այստեղ բնակվում էին Իսրայէլացիք: Այստեղ է Հռամեստ կամ Ռամսես կամ Նարպաօլիս քաղաքը, որտեղից Իսրայէլացիք ճանապարհ ընկան դէպի Քանանացւոց աշխարհը:

ՅԵ	Հայկական բարձրագոյն
ՅԵ	Հայկական
ՅԵ	Յ. Ա. Ն. Կ. Ն. Ի. Բ. Ե. Դ. Բ.
ՅԵ	Հայկական
ԴԵ	Հայկական
ՅԵ	ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ
ՅԵ	Հայկական
ՅԵ	ՊԱԼԵՍՏԻՆ

Գլխաւոր	Երկ.
Պալեստինի անունը	5
Պալեստինի սահմանները	5
Պալեստինի տարածութիւնը	5
Պալեստինի մակերեսութիւնը	5
Պալեստինի գետերը	5
Պալեստինի լճերը	6
Պալեստինի օդը	7
Պալեստինի բուսերը	7
Պալեստինի կենդանիները	8
Պալեստինի հանքերը	8
Պալեստինի բնակիչները	8
Պալեստինի բնակչաց կրօնը	9
Պալեստինի բնակչաց կեանքի եղանակը	11
Պալեստինի բնակչաց բնական կեանքը	12
Պալեստինի քաղաքական բաժանումն	13
Հրէաստան	14
Սամարիա	22
Գալիլիա	22
Պերէա	24

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ՊԱԼԵՍՏԻՆԻ ԾՐՁԱԿԱՅ ԵՐԿՐՈՐԵՐԸ

Փղշտացւոց աշխարհ	25
Ամաղեկացւոց աշխարհ	25
Եղմացւոց աշխարհ	25
Մովաբացւոց աշխարհ	25
Մադիամացւոց աշխարհ	25

Ամօնացւոց աշխարհ	26
Ատորիք	26
Փեւեկիկէ	26
Միջագետք	26
Հայաստան	27
Սինայի Թերակղզի	28
Եգիպտոս	30

ԲՈՒՈՐ ԳՐԱՎԱՃԱՌՆԵՐԻ ՄՅՏ ԳՏԱՆՎՈՒՄ ԵՆ
ԻՄ ՀԵՏԵՒԵԱԼ ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1. Ֆիզիքական, ժողովր. և քաղաք. աշխար. նախկին
Հայաստանի 60 կ.
2. Քարտեզ նախկին Հայաստանի. 25 կ.
3. Հայրենագիտութիւն. պատկերազարդ ձեռնարկ . 60 կ.
4. Սուրբ երկիր կամ Պալեստին. աշխարհագրական
պատկերազարդ ձեռնարկ 20 կ.



ՊԱՏՐԱՍ Է ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

1. Աշխարհացոյց ատլաս.
2. Քարտեզ Սուրբ երկրի.
3. Աշխարհագրութիւն Հին Հայաստանի.
4. Մեթոդիկալ աշխարհագրութեան.
5. Իրադիտութիւն.

Дозволено ценз. Тифлисѣ. 4 Февраля 1883 г.
Типографія Н. Мартиросіанца, на Орб. ул. № 5



